ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Սիսիան **06/12/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 15 անդամներ:

Բացակա էին՝ Դավիթ Դավթյանը, Անի Հարությունյանը, Գեվորգ Դավթյանը, Մարինե Գրիգորյանը, Ավագ Ասատրյանը, Աննա Ավետիսյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝

Վարդան Խաչատրյանը, Աննա Կարապետյանը, Դավիթ Այվազյանը, Կորյուն Մուրադյանը, Համիկ Ստեփանյանը, Քրիստինե Ներսիսյանը, Նարա Հովհաննիսյանը, Արմեն Խաչատրյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հովսեփ Առաքելյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կարեն Իվանյանը

Ավագանու նիստն իրավազոր էր, և այն հայտարարվեց բացված:

Նիստն ուղիղ հեռարձակվում էր:

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի 2024 թվականի դեկտեմբերի 6-ի հերթական նիստի օրակարգը.
   1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում լրացումներ կատարելու մասին.
   2) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականության 2024 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին.
   3) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի թիվ 14-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

4) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 17-ի թիվ 16-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.
5) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 114-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով ու նկատի ունենալով Սիսիան համայնքի ղեկավարի 2024 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 913-Ա որոշումը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Սիսիան համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարել լրացումներ և գույքացանկ ներառել 3905887 /երեք միլիոն ինը հարյուր հինգ հազար ութ հարյուր ութսունյոթ/ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով գույքը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Զեկուցող Դ. Այվազյանը ներկայացրեց գույքագրման փաստաթղթերում լրացվող գույքը:
Ավագանու անդամ Հ. Դանիելյանը առաջարկեց ցանկը կազմելիս գրել, թե տվյալ գույքը որտեղ է օգտագործվում:
Որոշման նախագիծը դրվեց քվեարկության:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 115-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 32-րդ կետով և 77-րդ հոդվածի 3-րդ մասով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականության 2023 թվականի գույքագրման փաստաթղթերը համաձայն 1-ից 4 հավելվածների՝
   1) հիմնական միջոցներ - 4761848609 /չորս միլիարդ յոթ հարյուր վաթսունմեկ միլիոն ութ հարյուր քառասունութ հազար վեց հարյուր ինը/ ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով,

2) շրջանառու միջոցներ - 21791470 /քսանմեկ միլիոն յոթ հարյուր իննսունմեկ հազար չորս հարյուր յոթանասուն/ ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով,
3) հիմնական միջոցների մաշվածք - 2029336793 /երկու միլիարդ քսանինը միլիոն երեք հարյուր երեսունվեց հազար յոթ հարյուր իննսուներեք/ ՀՀ դրամ արժեքով,
4) հիմնական միջոցների մնացորդային արժեք - 2732511816 /երկու միլիարդ յոթ հարյուր երեսուներկու միլիոն հինգ հարյուր տասնմեկ հազար ութ հարյուր տասնվեց/ ՀՀ դրամ արժեքով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Զեկուցողը նշեց, որ որոշման նպատակը համայնքային սեփականության գույքի արդյունավետ կառավարումը, պահպանումը և օգտակար ծառայության իրականացումն է:
Ն. Յազուլյանը հարցրեց, թե շենքերը քանի՞ տարվա է:
Դ. Այվազյանը պատասխանեց, որ 80-ականների է և ավելի հին:
Հ. Հակոբյանը հավելված 4-ում նշված բացակա գույքի մասին հարցրեց, արդյո՞ք ինչ-որ գործողություն չպետք է կատարվի:
Ա. Աղաջանյանն էլ հարցրեց, թե ինչպե՞ս է կատարվել գույքագրումը, դրանց ստացականներ են եղել, որով հանձնվել են որոշ մարդկանց:
Դ. Այվազյանը պատասխանեց, որ հանձնաժողովի կատարած աշխատանքի հիման վար են գրանցել, և բացակա գույքը պետք է վերականգնվի:
Երկար քննարկումից հետո հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-12 Դեմ-2 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 116-Ա/

Ավագանու անդամներ Ջ. Մարգարյանը, Ա. Աղաջանյանը դեմ քվեարկեցին, իսկ Հ. Հակոբյանը չմասնակցեց քվեարկությանը:

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի ԹԻՎ 14-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ԻՎԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 34-րդ հոդվածով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 14-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն և որոշման 2-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Ջ. Մարգարյանը հարցրեց, որ ըստ հաստիքացուցակի 193 աշխատող է, գործում է 174 հաստիք, ինչո՞ւ մնացած հաստիքներում աշխատողներ չեք ընդունում: Թափուր հաստիքների հաշվի՞ն են աշխատավարձերը բարձրանում:

Աշխատակազմի քարտուղար Կ. Իվանյանը պատասխանեց, որ մրցույթ են հայտարարել 19 թափուր հաստիքների համար, մասնակից չի դիմել, չեն համալրվել կամ դիմողները չեն համապատասխանում պահանջներին, իսկ աշխատավարձները դրա հաշվին չի բարձրանում:
Ֆինանսատնտեսական բաժնի պետ Դ. Այվազյանն էլ ավելացրեց, որ այդ գումարները տեղափոխվում է հաջորդ տարվա ֆոնդային բյուջե և օգտագործվում է այլ ծախսերի համար:
Հ. Հակոբյանը հարցրեց, որ 4 վարորդի հաստիք կա, քանի՞ մեքենա ունեք և աշխատավարձի բարձրացումը ի՞նչ սկզբունքով է կատարվում:
Կ. Իվանյանը պատասխանեց, որ 4 մեքենա կա, որից 1-ը տրամադրվել է հիվանդանոցին: ՏԻՄ օրենքի 28-րդ հոդվածում հստակ գրված է, որ համայնքի ղեկավարի դրույքաչափը չի կարող ավել լինել Ազգային ժողովի պատգամավորի աշխատավարձի 71,04% դրույքից: Համայնքի ղեկավարի աշխատավարձը մինչ այսօր կազմել է ԱԺ պատգամավորի աշխատավարձի 60%-ը, հիմա բարձրացվել է աշխատավարձի 70%-ը, իսկ մյուսներինը՝ 81%-ից ավել չի կարող լինել:
Հարց ու պատասխանից հետո որոշման նախագիծը դրվեց քվեարկության:

Կողմ-13 Դեմ-2 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 117-Ա/

Ավագանու անդամներ Ջ. Մարգարյանը և Հ. Հակոբյանը դեմ քվեարկեցին:

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի ԹԻՎ 16-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով ու 34-րդ հոդվածով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 17-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 16-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.
   1) որոշման թիվ 1 հավելվածի 1-ին տողի «Պաշտոնային դրույքաչափը» սյունակի «194400» թիվը փոխարինել «200000» թվով, 2-րդ տողի «124200» թիվը փոխարինել «134200» թվով, 3-րդ տողի «104000» թիվը փոխարինել «114000» թվով, 13-րդ տողի «104000» թիվը փոխարինել «120000» թվով,
   2) որոշման թիվ 3 հավելվածի 1-ին տողի «Պաշտոնային դրույքաչափը» սյունակի «194400» թիվը փոխարինել «200000» թվով, 2-րդ տողի «124200» թիվը փոխարինել «134200» թվով, 3-րդ տողի «104000» թիվը փոխարինել «114000» թվով, 15-րդ տողի «104000» թիվը փոխարինել «120000» թվով,
   3) որոշման թիվ 4 հավելվածի 1-ին տողի «Պաշտոնային դրույքաչափը» սյունակի «194400» թիվը փոխարինել «200000» թվով, 2-րդ տողի «124200» թիվը փոխարինել «134200» թվով, 3-րդ տողի «104000» թիվը փոխարինել «114000» թվով, 13-րդ տողի «104000» թիվը փոխարինել «120000» թվով,
   4) որոշման թիվ 6 հավելվածի 1-ին տողի «Պաշտոնային դրույքաչափը» սյունակի «173000» թիվը փոխարինել «190000» թվով, 2-րդ տողի «110000» թիվը փոխարինել «120000» թվով, 4-րդ տողի «110000» թիվը փոխարինել «120000» թվով, 5-րդ տողի «107000» թիվը փոխարինել «133000» թվով,

5) որոշման թիվ 7 հավելվածի 1-ին տողի «Պաշտոնային դրույքաչափը» սյունակի «154000» թիվը փոխարինել «170000» թվով, 2-րդ տողի «104000» թիվը փոխարինել «120000» թվով, 3-րդ տողի «107000» թիվը փոխարինել «119000» թվով,
6) որոշման թիվ 8 հավելվածի 1-ին տողի «Պաշտոնային դրույքաչափը» սյունակի «162000» թիվը փոխարինել «170000» թվով, 2-րդ տողի «107000» թիվը փոխարինել «120000» թվով, 18-րդ տողի «110000» թիվը փոխարինել «120000» թվով, 41-րդ տողի «104000» թիվը փոխարինել «160000» թվով,
7) որոշման թիվ 9 հավելվածի 1-ին տողի «Պաշտոնային դրույքաչափը» սյունակի «160000» թիվը փոխարինել «180000» թվով, 2-րդ տողի «107000» թիվը փոխարինել «127000» թվով, 3-րդ տողի «110000» թիվը փոխարինել «126000» թվով,
8) որոշման թիվ 10 հավելվածի 6-րդ տողի «Պաշտոնային դրույքաչափը» սյունակի «107000» թիվը փոխարինել «110000» թվով,
9) որոշման թիվ 11 հավելվածի 1-ին տողի «Պաշտոնային դրույքաչափը» սյունակի «160000» թիվը փոխարինել «170000» թվով, 4-րդ տողի «104000» թիվը փոխարինել «111000» թվով,
10) որոշման 12-րդ հավելվածի «8» տողի «Պաշտոնային դրույքաչափը» սյունակի «130000» թիվը փոխարինել «180000» թվով, 49-րդ տողի «2», «2» թվերը փոխարինել «3»,«3» թվերով, և «259200» թիվը փոխարինել «388800» թվով, հավելվածը ավելացնել «56» տողով՝

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Աշխատակիցների թվաքանակ	Հաստիքային միավորի քանակ	Պաշտոնային դրույքաչափ	Աշխատավարձն՝ ըստ դրույքաչափի
56	Բուժքույր	1	0.5	104000	52000

2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Զեկուցող Դ. Այվազյանը մանրամասը ներկայացրեց, թե համայնքային ենթակայության կազմակերպություններում որ հաստիքի դրույքաչափն է փոփոխվել:
Երկար քննարկումից հետո որոշման նախագիծը դրվեց դրվեց քվեարկության:

Կողմ-13 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 118-Ա/

Ավագանու անդամ Ջ. Մարգարյանը դեմ քվեարկեց:

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ԻՎԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի դեկտեմբերի 20-ին, ժամը 16:00-ին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 119-Ա/

Ավագանու անդամներ

ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՇՈՏ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԲԵԼԼԱ ԹԱՄՐԱԶՈՎԱ

ՀՐԱՉՅԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԱԽՇՈՒՆ ՅԱԶՈՒԼՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՋԻՎԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Կարեն Իվանյանը _____